ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.**

   Գևորգ Պապոյան- Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարար

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**

   Եթովպիայի Դաշնային Ժողովրդավարական Հանրապետություն՝ ք. Ադիս Աբեբա, 2025թ. հուլիսի 27-ից հուլիսի 30-ը ներառյալ

3. **Հրավիրող կողմը.**

   ՄԱԿ-ի Պարենի և Գյուղատնտեսության կազմակերպություն (FAO)

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

   ՄԱԿ-ի պարենային համակարգերի գագաթնաժողովի գնահատման երկրորդ հանդիպմանը (Second United Nations Food Systems Summit Stocktake-UNFSS+4) մասնակցելու նպատակով:

5. **Քննարկված թեմաները.**

   1. **Սննդային համակարգերի վերափոխում և գյուղատնտեսության կայուն զարգացում՝** ներառյալ պարենային անվտանգություն, ինքնաբավություն, օրգանական և բարձրարժեք արտադրության խթանում, կենսաբազմազանության պահպանում, կլիմայական մարտահրավերների արձագանք և ռազմավարական առաջնահերթությունների իրականացում:
   2. **Տեխնոլոգիական և ենթակառուցվածքային բարեփոխումներ՝** ինտենսիվ այգեգործություն, ոռոգման և գյուղտեխնիկայի արդիականացում, թվային լուծումների ներդրում, ինչպես նաև գրանցման և վերահսկման համակարգերի զարգացում:
   3. **Միջազգային համագործակցություն և ներդրումների խթանում՝** տնտեսական գործընկերություն Եթովպիայի և այլ երկրների հետ, ներառյալ հանքարդյունաբերության ոլորտը, փորձի փոխանակումը, ինչպես նաև համագործակցության խորացում FAO-ի, զարգացման բանկերի և այլ գլոբալ կառույցների հետ:
   4. Զբոսաշրջության ոլորտում համագործակցության զարգացման հնարավորություններ:

6. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

1. 2025 թվականի հուլիսի 27-ից 30-ը ՀՀ պատվիրակությունը մասնակցել ՄԱԿ-ի պարենային համակարգերի գագաթնաժողովի գնահատման երկրորդ հանդիպմանը, որի կազմում է եղել նաև ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Արման Խոջոյանը: Հանդիպման ընթացքում ՀՀ էկոնոմիկայի նախարար Գևորգ Պապոյանը ողջույնի խոսքում կարևորել է գագաթնաժողովի անցկացումը՝ նշելով, որ այն հարթակ է տրամադրում՝ լուսաբանելու Հայաստանի հաջողված ազգային նախաձեռնություններն ու նորարարական մոտեցումները, որոնք ուղղված են պարենային համակարգի մարտահրավերների հաղթահարմանը:
   Ելույթի ընթացքում նախարարը համառոտ ներկայացրել է Հայաստանի գյուղատնտեսության ոլորտի ներկա վիճակը՝ ընդգծելով հիմնական մարտահրավերներն ու զարգացման առաջնահերթությունները: Նա շեշտել է, որ Հայաստանի գյուղատնտեսական քաղաքականությունը կենտրոնացած է պարենային անվտանգության ու ինքնաբավության ուժեղացման վրա, միավորված ագրարային քաղաքականության զարգացման, բարձրարժեք և օրգանական գյուղատնտեսության խթանման, ինչպես նաև պարենային անվտանգության բարձրացման վրա:
   Նախարարը նաև նշել է, որ չնայած առկա մարտահրավերներին՝ Հայաստանը գրանցել է նշանակալի առաջընթաց պարենային անվտանգության բարելավման գործում՝ իրականացնելով նպատակային պետական նախաձեռնություններ և զարգացնելով միջազգային համագործակցությունը: Նա կարևորել է Հայաստանի պատրաստակամությունը շարունակելու և խորացնելու համագործակցությունը ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (FAO), զարգացող և տարանցիկ երկրների, միջազգային զարգացման բանկերի և այլ գլոբալ գործընկերների հետ:
2. Հուլիսի 28-ին ՀՀ էկոնոմիկայի նախարար Գևորգ Պապոյանը և նախարարի տեղակալ Արման Խոջոյանը հանդիպել են նաև Եթովպիայի հանքարդյունաբերության նախարար Հաբթամու Թեգեգնեի հետ, որի ընթացքում քննարկվել են երկու երկրների միջև տնտեսական համագործակցության զարգացման հնարավորությունները՝ հատկապես այն ոլորտներում, որտեղ առկա են փոխլրացնող հետաքրքրություններ և համատեղ աշխատանքի ներուժ: Նախարարը ներկայացրել է Հայաստանի հնարավորությունները հանքարդյունաբերության, տնտեսական ռազմավարական ուղղությունների և ներդրումային միջավայրի զարգացման համատեքստում՝ կարևորելով միջազգային գործընկերների հետ փորձի փոխանակումը:
3. Հուլիսի 29-ին ՄԱԿ-ի պարենային համակարգերի 2-րդ գագաթնաժողովի եզրափակիչ նիստի շրջանակում, բարձրաստիճան պաշտոնյաների հետ քննարկվել են գյուղատնտեսության, պարենային անվտանգության և կայուն զարգացման խնդիրները: Գագաթնաժողովին ներկա էին Եթովպիայի նախագահ Թայե Ացկե Սելասիեն, ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի տեղակալ Ամինա Ջեյն Մոհամմեդը, ինչպես նաև ՄԱԿ-ի անդամ երկրների և միջազգային կազմակերպությունների ղեկավարներ:
   «Համատեղ ճանապարհի ձևավորում դեպի 2030՝ Ադիսից Բելեմ, Դոհայից՝ Երևան ու Նյու Յորք» խորագրով քննարկման ժամանակ, նախարար Պապոյանը հանդես է եկել ելույթով՝ անդրադառնալով 2026 թվականին Երևանում կայանալիք ՄԱԿ-ի

Կենսաբազմազանության մասին կոնվենցիայի կողմերի 17-րդ համաժողովին (COP 17): Նա ընդգծել է կենսաբազմազանության առանցքային դերը գյուղատնտեսության կայուն զարգացման և պարենային անվտանգության ապահովման գործում՝ նշելով, որ այս ուղղությամբ համագործակցությունը պետք է շարունակվի և խորանա՝ ի նպաստ տարածաշրջանային և գլոբալ կայունության:

Նախարարը նաև հրավիրել է գագաթնաժողովի մասնակիցներին այցելել Հայաստան՝ մասնակցելու ոչ միայն COP 17 համաժողովին, այլև անձամբ ծանոթանալու Հայաստանի պատմամշակութային ժառանգությանը և բազմակողմ զարգացման ներուժին:

4. Նախարար Գևորգ Պապոյանը Ադիս Աբեբայում հանդիպում է ունեցել նաև Եթովպիայի զբոսաշրջության նախարար Սելամավիտ Կասսայի հետ:

Հանդիպման ընթացքում քննարկվել են երկու երկրների միջև զբոսաշրջության ոլորտում համագործակցության զարգացման հնարավորությունները, փորձի փոխանակման և համատեղ նախաձեռնությունների իրականացման հեռանկարները: Կողմերը կարևորել են մշակութային զբոսաշրջության, բնական ժառանգության պահպանման և զբոսաշրջային հոսքերի խթանման ուղղություններով համագործակցությունը:

Նախարար Պապոյանը նշել է, որ Հայաստանը շահագրգռված է ընդլայնել համագործակցությունը Աֆրիկյան մայր ցամաքի երկրների, այդ թվում՝ Եթովպիայի հետ՝ զբոսաշրջության և հյուրընկալության ոլորտներում:

7. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը**.

Պայմանավորվածություն է ձեռք բերվել շարունակել փոխգործակցությունը և դիտարկել համատեղ ծրագրերի իրականացման հնարավորությունները:

8. Ստորագրությունը, ամսաթիվը.

01.08.2025 թ.

ԴԵՎՈՐԳ ՊԱՊՈՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ վարչապետի 2023 թվականի մարտի 23-ի
N 326-Ն որոշման
Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2018 թվականի
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն որոշման

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը՝ **ՀՀ էկոնոմիկայի նախարարություն**

2.Գործուղման մասին իրավական ակտի համարը՝ **ՀՀ վարչապետի N 658-Ա որոշում առ 23.07.2025թ.**

3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը)՝

Գևորգ Պապոյան - ՀՀ էկոնոմիկայի նախարար

(թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում)

4. Գործուղման ժամկետները՝ **2025 թվականի հուլիսի 27-30-ը**

5. Գործուղման վայրը՝ **Եթովպիայի Դաշնային Ժողովրդավարական Հանրապետություն (Ադիս Աբեբա)**

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեով արտասահմանյան պաշտոնական գործուղումների համար նախատեսված միջոցների հաշվին:

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն)

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան)
(ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը)

[■] **ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը**

[ ] բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		Գևորգ Պապոյան	Ընդամենը (դրամ)
Ճանապարհածախս	Ավիածառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)	էկոնոմ դաս	
	Ավիատոմսի արժեքը (դրամ)	590,142	590,142
Գիշերավարձ	Վճարը 1 գիշերվա համար		
	Վճարը 1 գիշերվա համար (դրամ)		
	Գիշերների քանակը		
	Ընդամենը (դրամ)		
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար		
	Վճարը 1 օրվա համար (դրամ)		
	Օրերի քանակը		
	Ընդամենը (դրամ)		
Այլ ծախսեր	Հակահամաճարակային		
	Նմուշառումների վճար		
	Մուտքի արտոնագրի վճար		
	Այլ ծախսեր /ՊՊԱՍ սրահ/	10,000	10,000
Ընդամենը ծախսեր (դրամ)		600,142	600,142

Գլխավոր քարտուղար
/Գլխավոր ֆինանսիստ/

ՀԱՅԿԱԶ ՆԱՍԻԲՅԱՆ